

երիվարք կրնան ֆրասուիլ, Մենք յառաջ անցանք, միտքերնիս զնեղով գետին քով հանգչիլ, եթէ ստուգապէս անհնարին է անցնիլը:

Ամէն տեղ հրաբղիային ժայռք կ'ելլեն դիմացնիս, և բազմաթիւ հետք երկրաբանական կերպարանափոխութեանց: Եօթն հազարամետր ճամբան առաջ քշելով, կը հասնինք ի գետեզրն և կը տեսնենք ջուրը խռովեալ վիճակի մը մէջ: Չափարներէն մէկն խորութիւնն չափելով կ'ապահովցնէ թէ անցքը անվտանգ է. ուստի և մարդիկ ջուրը կը մտնեն ձիերը բռնելու, և մենք ալ անոնց ետեւէն կը շարուինք: Երեսայս մէջ առաջին անգամն է որ երիվարաւ խռովայոյզ գետի մէջէն պիտի անցնիմ: ուստի գլխոյ պտոյտ չկրելու համար աշուրներս կը գոցեմ: Առանց պատահարի ամէնքն կ'անցնին ի միւս կողմն, բաց ի բեռնաբարձ կենդանոյ մը որ կը շեղի, և չափաբ կը վազեն կը հասնին զայն վտանգէն ազատելու: Պզտի շնիկնիս անվախ գետ կը նետուի. բայց տեսնելով որ յորձանքէ կրնայ տարուիլ, կը փութայ գէպ ի ցամաքն, աղաչաւորի աչքով մեզի նայելով որ չըլլայ թէ մոռնանք, բայց չափարներէն մէկը յատկապէս գետէն կ'անցնի՝ զայն միւս կողմը փոխադրելու համար:

Շարայարեղի

Ա Ն Է Ծ Բ

(Տես յէջ 97)

Օրը տարաժամիլ սկսաւ. երեկոյեան զով քամին քաղցր կերպով կը փչէր պարտիզին ծառերուն մէջէն, ուր հրեշտակային դէմքով վայելչահասակ աղջիկ մը կը ճեմէր տխուր կերպով: Երէցփոխանին նշանած դուստրն էր գեղեցիկ աղջիկը, Մարգարիտա Մալնաշի օրիորդը՝ զանազան մտածութեանց մէջ ընկղմած, որոյ յշտացեալ սիրտը անտարակոյս չէր տանջեր զինքը, եթէ գիտնար որ երէկ ցորեկէն ետքը՝ իւր փեսայացուն փոխեց դիտաւորութիւնը:

Քիչ ատենէ անոր ամուսինը պիտի ըլլայ՝ զոր ի սրտէ չի սիրեր... Անդառնալի՝ վճիռ, գործը պէտք է կատարուի, ճար չկայ, վասն զի ծնողքը իւր մանկութենէ անոր են նուիրեր զինքը... և որ չարագոյնն է, ամէն օր պիտի հանդիպի այն դառնացեալ սրտով, երեսը գոյն չունեցող երիտասարդին

հետ, անմոռանալի և անկեղծ սիրով կապուած էր հետը, ճշմարիտ հատորն էր սրտին: Ա՛հ, զանէ հեռանար ասկէ, գոնէ ուրիշ տեղ մը երթար ծառայելու, որ առիթ չունենային ստէպ տեսնուիլ իրարու հետ, այդ կերպով թերեւս դառն կեանքը տանելի ըլլայ:

— Բարի իրիկուն ձեզ, Մարգարիտա օրիորդ:

Ինքիբմէ դուրս ելած շփոթեցաւ աղջիկը այդ ձայնը լսելով, որն որ թէպէտ ծանօթ կ'երևար իրեն՝ բայց կարծեց որ երևակայութիւն է: Ետեւը նայելով՝ տեսաւ տխուր երեսով՝ սիրտը կտորած իւր սիրականը:

— Դո՛ւ ես, Գրիգոր, հարցուց իրեն քմծիծաղ հետաքրքրութեամբ, և ի՞նչ կը փնտռես հոս:

— Նամակ մը բերի ձեր սիրելի հօրը, ու տեսնելով զձեզ, եկայ բարև մը տալու:

— Նամակ մը իմ հօրս... զրկողն ո՞վ է, և ի՞նչ պատճառի համար քեզի հետ:

— Ղըկողը իմ տէրս է Անիօր, և ինձի հետ զրկելուն պատճառը ուրիշ բան չէ, բայց եթէ չի վստահեցաւ ուրիշի ձեռքը յանձնել այսպիսի կառուոր թուղթ մը:

— Արդեօք ի՞նչ է մէջը գրած:

— Քիչ ատենէ կ'իմանաք անշուշտ, պատասխանեց Գրիգոր, և մօտեցնելով օրիորդին, անմեղ կերպով հարցուց իրեն մօտեմաբար:

— Սիրելիդ իմ Մարգարիտա, դնենք թէ դուք ազատ ըլլայիր, ու ես ալ իմ ճակտիս քրտինքովը այն կէտին հասնէի՝ որ կարօտ չ'ըլլամ ուրիշներու, կը պսակուէի՞ք ինձ հետ ամուսնական սուրբ խորհրդով:

Երիտասարդին այս խօսքերը հաստատեցին Մարգարիտայի սրտին մէջ այն սէրը, զոր արդէն կ'զգար անոր նկատմամբ. ուրախութեամբ հանդերձ տխուր զգացմունք մը պաշարեց հոգին. լեզուն կապուեցաւ յանկարծակի, և առանց բան մը ըսելու՝ Գրիգորին ձեռքը սրխմելով, բաժնուեցան իրարմէ:

Այս միջոցին Ստեփան Մաշնաշին՝ բանալով նամակը իւր սենեակը, ապա շեցաւ մնաց մատանի մը գտնալով նամակին մէջ: Երկար ժամանակ ճրագին զիմաց զննեց մատանին՝ ասդին անդին զարձնելով, ու երբ համոզուեցաւ թէ ստուգիւ իւր դասեր նշանաւորի մատանին է, բարկութեամբ լեցուած, նամակը առանց կարդալու ճմուռկելով՝ ճրագին բոցով այրել ուզեց. բայց հետաքրքրութիւնը-գոհացնելու համար կիրքը զսպելով կարգաց նամակը, որն որ հետեւեալ կերպով էր գրուած:

ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՍ

Մինչև ցայսօր այն յուսով կը մխիթարուէի, որ դուք քիչ ատենէ՝ ինձ հայրակից պիտի ըլլաք, և հիմայ ցաւօք սրտի կ'ստիպուիմ՝ յայտնել, որ բազմը զրկեց զիս այդ երջանկութենէ:

Մեր երկուքներնուս համաձայնութեամբ՝ ըլլալիք ամուսնութեան առջև՝ այնպիսի ծանր արգելքներ ելան, որոնց ընդդէմ դնելը անկարելի է, և զոր կ'արգելու մեզ մարդկութեան ուղիղ զգացմունքը: Իմ որդիս սիգուլացի ատաղձագործի մը դստեր հետ՝ ներքին կապակցութիւն ունենալով, խղճմտանք կ'ընենք զժբաղղ աղջիկը վատահամբաւ թողուլ:

Որդւոյս ըրածը ինձ անծանօթ էր բոլորովին, մեր ժողովրդապետը այսօր յայտնեց ինձ եղածը, և զայն ևս՝ թէ աղջկան հայրը արդէն իսկ բողոքեր է ընդդէմ ամուսնութեան՝ մեր զաւակաց, զոր մենք յօժար կամօք յարմարացուցեր էինք մէջերնիս: Ժողովրդապետին ճարտասանական և ազդու խօսքերը համոզեցին որդիս, որ թողու ձեր սիրելի զուտորը որուն հետ նշանուած էր, և պատկուի անոր հետ՝ զոր ամուսնական խոստմունքներով մոլորցընելով՝ անպատիւ ըրաւ: Էնոյն հետ զիս ալ համոզեցուց ժողովրդապետը՝ դիմացնիս դռնելով մեղաց ծանրութիւնը, որով պատասխանատու պիտի ըլլանք Աստուծոյ անհղ ատենին զիմաց, եթէ թողունք արտազնազործին զժբաղղ զուտորը՝ մեր որդւոյն պատճառաւ՝ վատահամբաւ եղած:

Այս ամէնը զիսնալով, կարծեմ դուք ևս այսուհետեւ չէք յօժարիր տալ ձեր աղջիկը կնութեան իմ որդւոյս, որով կ'ստիպուիմ, ըստ փափաքանաց որդւոյս, ծրարել հոս ձեր դստեր նշանուքի մատանին՝ ներուձն խնդրելով ձեզի պատճառած տհաճութեանց համար:

ԱՆԿԵՂՉ ԲԱՐԵԿԱՄ ՁԵՐ

Գրիգոր Աճիշօր

Ստեփան Մալնաշին տեսնելով իւր վաղեմի կարգադրութիւնը յօդս ելած, անպատմելի կերպով կիրք ելաւ: Նստած տեղէն ոտք ելլելով՝ աթոռը գետին զարկաւ, նամակը կտոր կտոր ըրաւ և մատանին նետելով՝ վայրագաբար վեր վար քալել սկսաւ սենեկին մէջ:

Միւս սենեակը՝ երեկոյեան կերակուրի համար, սեղանը պատրաստուած էր: Մալնաշիին տղաքը, Յակոբ և Ստեփան, սեղանին չորս կողմը քալելով, կ'սպասէին որ կերակուր ուտեն: Մարգարիտան ներս գալով պարտեզէն, մայրերնին կերակուրը ներս բերաւ խոհանոցէն:

— Մարգարիտա, գնա կանչէ հայրդ, ըսաւ մայրը կերակուրը պատրաստէ:

Գնաց աղջիկը՝ վախնալով մը բացաւ հօրը սենեկին դուռը, վառն զի Գրիգորին բերած նամակը կասկածելի երեցաւ երեսն. և իրօք անհիշեալ չէր ունեցած վախը, որովհետեւ չափէն աւելի այլալլած գտաւ իւր հայրը, որուն աչքերէն կարծես թէ կայծակներ կը թափէին:

— Հրամեցէք, հայր իմ, կերակուր ուտելու, սեղանը պատրաստ է, ըսաւ Մարգարիտա դողալով:

— Չեմ ուզեր, թո՛ղ զիս առանձին:

— Ի՞նչ պատահեցաւ, սիրելի հայր:

— Մեծ նախատինք, զժբա՛ղղ աղջիկ. նշանտուքի մատանիդ ետ դարձուցին, պատասխանեց բարկութեամբ:

— Նախատանայ քան մը շեմ տեմներ, ըսաւ մաքէն Մարգարիտա, և լաւ համարեցաւ թողուլ առանձին իւր հայրը։ Դուրս ելլելով՝ քովի սենեակը մտաւ, ուր գտաւ իւր մայրը նոյնպէս այլայլած, եղբայրներն ալ տրտում և տխուր։

— Ի՞նչ է այս, սիրելի մայր, միթէ դո՞ւ ալ մեծ բանի տեղ ես դրեր՝ որ մատանիս ետ դարձուցին, և դո՞ւք ալ սիրելի եղբայրներ։ Եւ ոչ իսկ մաքերնէդ անցուցէք. բարի է Աստուած, և զեռ կրնայ զրկել և ինձ յարմարագոյն փեսայացու։ Թողունք հիմայ ամէն բան, և նստինք կերակուր ու տելու, ըսաւ Մարգարիտա առանց խռովելու։

— Ախորժակ չ'ունիմ, պատասխանեց մայրը, բոլորովին տխրած։

— Գտնէ դուք, սիրելի եղբայրներա, նստեցէք ու կերէք հանդարտ սրտով։ Յակօր և Ստեփան սկսան ուտել, իսկ Մարգարիտա մօրը թեւ բռնելով, աղաչեց որ պարտէզ իջնան։

— Էլ ուզեմ նախ հօրդ սենեակը մտնալ, կրկնեց մայրը, որպէս զի ըսեմ իրեն թէ դուն ոչ միայն փոյթ չես ըներ, այլ և զո՛հ ես մեծապէս, որ մատանիդ ետ դարձուցին։

— Լաւագոյն է առ ժամն թողուլ զինքը մինակ, մինչև որ իջնայ բարկութիւնը, չ'ըլլայ թէ աւելի ևս զայրացընենք զինքը զանազան պատճառաբանութեամբ։

Մայրը համոզուեցաւ զստեր ըսածներուն վրայ, և հետը մէկտեղ պարտէզ իջաւ, ուր որ անկեղծ սրտով խոստովանեցաւ Մարգարիտա իւր մօրը՝ թէ ինքը ի սկզբանէ հետէ չէր սիրեր զ'Լուկաս Անիշօր, և միայն իրենց հնազանդելու և սիրտերնին չի ցուցընելու համար, յանձն է առեր ամուսնանալ հետը, թէ և զիտէր ստուգիւ՝ որ ցկեանս թշուառ պիտի ըլլար, որով մատանւոյն դարձը նախախնամութեան մասնաւոր հրաշքը կը համարէր իրեն նկատմամբ։

— Հետաքրքիր եմ զիտնալու, թէ արդեօք ի՞նչ պատճառի համար մատանիդ ետ դարձուցին, ըսաւ մայրը, այս մէկը զոնէ պէտք ենք հարցընել հօրդ։

— Ես ալ հետաքրքիր եմ անոր, կրկնեց դուստրը, բայց համբերենք, չի հարցընենք այսօր, վաղուան թողունք, երբ բարկութիւնը անցած ըլլայ։

Անկեղծութեամբ խոստովանեցաւ նաև, թէ ինքը շատոնց է որ սէր ունի Գրիգոր Տոմինիկին վրայ. բայց աղաչեց մօրը որ այս ինդիբը ծածուկ մնայ հօրը զիմաց, մինչև որ հասնի Գրիգոր այն կէտին, երբ խանութ քանալով ինք իրեն տէրը ըլլայ, որովհետև հայրը կրնայ տրամել, թէ ինչպիսի՞ համարձակութեամբ վաճառականի մը օգնականը՝ կը յանդգնի իւր գտներ վերայ աչք ունենալ ամուսնութեան փափաքով, որով և բարկութիւնը թերևս կըրկանապատիկ զայրանայ։

Մարգարիտային մայրը այս ամէնը լսելով, մէկ զարմանքը միւսը կը յաջորդէր. և թէպէտ զիտէր որ աշխարհիս զիմաց խօսակցութեան նիւթ պիտի ըլլայ պատահած դէպքը, այնու հանդերձ ուրախ էր և սիրտը հանգարտ՝ թէ

իւր սիրելի զուտորը գոհ է որ խափանուեցաւ ամուսնութիւնը Ղուկաս Անի-
շօրին հետ, որն որ զժբաղզ հետեւանք պիտի ունենար զստեր նկատմամբ։

Ստեփան Մայնաշի բոլոր բարկութեան հեղեղը ընդգէմ, ժողովրդապետին
ուղղեց, ամէն բանի համար զինքը մեղադրելով։

— Ողորմելի դժբաղ զարարած — այլեւո՞՞ծեալ բարկութեամբ կ'որոտայր
ի ներքուստ — խայտառակեցի՛ր զիս։ Ի՞նչ պիտի ըսէ աշխարհքս, երբ իմա-
նայ՝ թէ անպիտան աղջկան մը համար, փեսացուս թողուց իմ՝ զուտարս։
Գեղեցիկ օրինակ պիտի ըլլայ այս բոլոր աղջկանց, որոնք ասկէջ ետքը, մէկ
դի պիտի թողուն առաքինութեան ճամբան մի միայն անոր համար, որ այս
քահանայն իւր պաշտպանութեան ներքեւ առնելով զիրենք իւրաքանչիւրին ա-
մուսին գտնայ։ Իսկ առաքինի, պարկեշտ աղջկունք ամուսին ծերանան պիտի։

Հիմայ ի՞նչ կերպով իմացընեմ ես խեղճ զստերս, որ իւր փեսայացուն,
քահանային խօսքերուն նայելով՝ անպարկեշտ աղջկան մը համար թողուց զինքը։

Ա՛հ, ի՞նչ աստիճանի կ'ատեմ ես հիմայ այդ ձեւացեալ բարեպաշտ քա-
հանայն, որ իւր կեղծաւորութեամբը մարդկանց սէրը կրցեր է զրուել...

Յանկարծակի դժոխային հնարք մը միտքը ինկաւ։ Վէմքը զիւսկան երեւոյթ
ստացաւ։

— Կը ծածկեմ աշխարհիս զիմաց՝ ընդգէմ քահանային ունեցած ատե-
ւութիւնս, բայց ընտանեացս պատճառած ամօթոյն և նախատանաց համար,
վրէժս պիտի հանեմ իրմէ։

Շարաշարելի

ԱՐԵՒՈՒ ԽԱԿԱՐՈՒՄՆ Ի 16 ԱՊՐԻԼԻ 1893

ՄԵՐ ընթերցողաց արդէն ծանօթ էր այս տարուան օրա-
ցուցէն՝ խաւարման օրը և ժամը, որ և միայն նշանակած էր
մասամբ տեսանելի ըլլալն ի Կ. Պոլիս, թէպէտ նոյն էր և վե-
նետկոյ համար ևս. սակայն սակաւ հանդիպելուն պատճառաւ՝
հետաքրքրական է և մասնականն, Մեր գիտողութեան աստե-
ղական փոքրիկ հեռագիտակի երկայնութիւնն էր 0, 57, իսկ առ-
արկայական ոսպնածէի տրամագիծն 0, 10, Պայծառ անամպ
օր մ'էր. մինչդեռ արեւս բիծերը գիտէի, սպասելով այն վայր-
կենին՝ յորում լուսնոյ շրջապատն արեւս շրջապատին պիտի դի-